առաքեցին երիցունս Բ եւ զոմանս նմանիս իւրեանց ի Զէքմէճէն՝ տալ արզուհալ վէզիրին թէ Զպատրի-արքն սպանանող այսքան ոգիք են, որ ընդդիմացան նմա եւ հակառակեցան հրամանի քում, եւ զտուգանս մեզ կրել տան. դատաստան խնդրեմք ի քէն։ Վասն որոյ արգիլէր զՌուհիճան և զայնս առ իւր ի կալանս երկաթեօք։ Եւ այլք ի Պալատցոց ընդ նոցա եղեն և զհաբեղայ Թումային յարուցին յայս գործ։ Թէպէտ և նայ ունէր առնելիք, բայց երկնչէր՝ զի մի եւ ինքն մեռցի ի ձեռաց նոցա, զի անողորմք էին։ Եւ եղեն չարկամք Ի-ի-ին Սուրբ Սարգսցիք՝ ունելով զհաբեղան ընդ իւրեանս թէ Արեան տէր են նոքա եւ մեք դրամս ոչ տամք։ Զի յառաջագոյն յետ սպանման Թումային Ե քսակ պահանջէին Ե եկեղեցին ի Սուրբ Սարգսայ. և նոքա ասէին՝ Մեք զի՞ տացուք. և նոքա ասէին՝ Աւագերիցու կայ կնիք մի եւ իշխանի միոյ։ Եւ նոքա ասեն՝ Հոգիք նոցին մի՛ մնասցեն ի նոսին, տացեն նոքա։ Եւ բազում կռիւ լինէր եւ աղմուկ. զինէին, կռվէին բազում երթևեկութեամբ առ դայ-մախամսն, և արք ոմանք Բ քսակ կտրեցին զի տա-ցեն, եւ այնու եւս ոչ կամեցան, այլ փակէին զժա-մատեղն. ոչ մատչէր պատարագ, ոչ լինէր աղօթս, այլ բնաւ կռվոյ տեղիք եւ թէատրոն չարութեան։ Եւ յորժամ եկն վէզիր, ետուն արզուհալ բազումս, այնքան՝ մինչ զի ի բարկութիւն շարժեալ վէզիրին ըմբռնեաց կալաւ ի քահանայից եւ յիշխանացն ասա-ցելոց Ը ոգի եւ եդ ի բանտս զբոյ մահապարտաց, վասն զի երթային հանապազ ի Տաւութ փաշան եւ ի Քեհատխանան մեծաւ զուարճութեամբ, ուր կայր բա-նակ Տաճկաց։ Քանզի եթէ նոքա ի յաջ գթեցան՝ եթէ զհերձուածող սպանանեմք եւ զչար, եւ սոքա՝ եթէ արեան տէր սոքայ են, պարտիս որ սոցա հախէն դաս. գթելով սոքա այսպէս ի ձախ։ Եւ հաբեղայ Թումա-